ՀՀ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱՅԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Անանյան Ք.Գ.[*]

Ամփոփում: Յուրաքանչյուր երկրի աշխատանքի շուկայի կայացման գործընթացում նշանակալի դերակատարում ունեն այն ձևավորող տարածաշրջանային աշխատանքի շուկաները, և այս առումով չափազանց կարևորվում է դրանց արդյունավետ կարգավորումը: Այդ նպատակով անհրաժեշտ է գնահատել տարածաշրջանային աշխատանքի շուկայի վիճակը՝ հաշվի առնելով առկա առանձնահատկությունները, ինչն էլ հնարավորություն կընձեռի վեր հանելու դրանում առկա հիմնախնդիրները և, ձեռնարկելով որոշակի միջոցառումներ, հաղթահարել դրանք: Վերջիններիս հիմնական թիրախը պետք է լինեն տարածաշրջաններում աշխատանքային ռեսուրսների արդյունավետ օգտագործումն ու գործազրկության մակարդակի նվազեցումը, արդյունքում՝ աշխատանքի շուկայում ընդհանուր լարվածության թուլացումը և հավասարակշռության հաստատումը:

Բանալի բառեր. տարածաշրջանային աշխատանքի շուկա, աշխատանքային ռեսուրսներ, աշխատուժ, աշխատուժի մասնակցություն, զբաղվածություն, գործազրկություն, աշխատանքի շուկայի կարգավորում

JEL Classification: E24, J01, J08, J21.

1. Ներածություն

Շուկայական տնտեսության կարևորագույն տարրերից մեկն աշխատանքի շուկան է, որը մարդկային գործունեության սոցիալ-աշխատանքային հարաբերությունների համակարգ է և արտացոլում է հասարակության ներսում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական գրեթե բոլոր փոփոխությունները (Остапенко, 2007, էջ 51)՝ միևնույն ժամանակ փոխազդելով ապրանքների ու ծառայությունների, կապիտալի և այլ շուկաների հետ:

Աշխատանքի շուկայի կայացվածությունը մեծապես կախված է այն ձևավորող տարածաշրջանային աշխատանքի շուկաներից, որոնց վրա ազդում են յուրաքանչյուր տարածաշրջանին բնորոշ յուրահատուկ սոցիալական, տնտեսական, բնակլիմայական, աշխարհագրական, պատմական, էթնիկական և այլ գործոններ: Վերջիններս պայմանավորում են տարածաշրջանների կտրվածքով ռազմավարությունների,

[*] Քրիստինա Գագիկի Անանյան — ՀՊՏՀ կառավարման ամբիոնի ասպիրանտ,
e-mail: ananyan.krist@gmail.com

ծրագրերի, հայեցակարգերի և նմանատիպ այլ փաստաթղթերի մշակման ու իրականացման առանձնահատկությունները, որոնք պետք է առնչվեն տարածաշրջանային աշխատանքի շուկաների զարգացմանը՝ նպաստելով աշխատանքի շուկայում առկա հիմնախնդիրների հաղթահարմանը և լարվածության նվազեցմանը:

Սույն հետազոտության նպատակը ՀՀ տարածաշրջանային աշխատանքի շուկաների ուսումնասիրությունն է՝ վեր հանելով դրանցում առկա առանցքային խնդիրները և առաջարկելով դրանց հաղթահարման ուղիներ:

2. Գրականության ակնարկ

Աշխատանքի շուկայի հավասարակշռման և զբաղվածության հիմնախընդիրներին անդրադարձել են տնտեսագիտության բազմաթիվ ակնառու ներկայացուցիչներ, որոնց աշխատությունների ուսումնասիրության արդյունքում եզրահանգել ենք նրան, որ այդ խնդիրների լուծման համար առաջարկվել են շուկայական ու պետական կարգավորումների տարբեր մոտեցումներ:

Այսպես, տնտեսագիտության տեսության դասականները՝ Ադամ Սմիթը (Smith A., 2007, էջ 33) և Դավիդ Ռիկարդոն (Ricardo D., 1951, էջեր 91-95), ժխտում էին պետության միջամտությունն աշխատանքի շուկայի կարգավորման գործում: Միևնույն ժամանակ նրանք շուկայական տնտեսությանը բնորոշ նորմալ վիճակ էին համարում լրիվ զբաղվածությունը, քանի որ ըստ նրանց՝ շուկայական տնտեսական համակարգի միջոցով կարելի է ապահովել ցանկացած տեսակի, այդ թվում՝ աշխատանքային ռեսուրսների լրիվ օգտագործում: Իրենց դիրքորոշումներով հիշատակված դասականների տեսակետներին էին հարում Ժան Բատիստ Սեյը, Ալֆրեդ Մարշալը, Միլթոն Ֆրիդմենը:

Ի հակադրումն վերոնշյալ տնտեսագետների մոտեցման՝ Կառլ Մարքսը (Гara, 2008, էջ 31), կարևորելով գործատուների միջև մրցակցությունը, աշխատանքի շուկայի հիմնախնդիրների լուծումը տեսնում էր պետական կարգավորման մեջ: Նման դիրքորոշմամբ է հանդես եկել նաև Ջոն Մեյնրադ Քեյնսը[1], ում կարծիքով շուկայական տնտեսական հարաբերությունները կատարյալ և ինքնակարգավորվող չեն. զբաղվածության ու տնտեսական աճի առավելագույն մակարդակների հասնելու համար անհրաժեշտ է պետական ակտիվ միջամտություն:

[1] http://www.economicsdiscussion.net/employment-theories/keynesian-theory-of-employment-with-diagram/3990 / Keynesian Theory of Employment (With Diagram)

Նորդասական սինթեզի հիմնադիր Պոլ Սամուելսոնն այս ուղղության այլ ներկայացուցիչների՝ Քեմբելլ Ռ. Մակկոնելլի և Սթենլի Լ. Բրյունի (Pofe, 2003, էջ 151) հետ միասին գտնում էին, որ աշխատաշուկայի կարգավորումն անհրաժեշտ է իրականացնել և՛ շուկայական, և՛ պետական լծակների զուգահեռ գործարկմամբ:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում ենք, որ աշխատաշուկայի արդյունավետ կարգավորման, դրանում զբաղվածության մակարդակի աճի և աշխատանքային ռեսուրսների խելամիտ օգտագործման տեսանկյունից նախընտրելի է բոլոր տիպի լծակների միաժամանակյա կիրառումը: Սույն մոտեցումն առավել կիրառական է տարածաշրջանային կոնկրետացմամբ:

3. Հետազոտության մեթոդաբանություն

Հետազոտության համար հիմք են ընդունվել Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ)՝ որպես աշխատանքի շուկան բնութագրող ցուցանիշների և դրանց հաշվառման մեթոդաբանության համար պատասխանատու կառույցի կողմից մշակված և կիրառվող սահմանումներն ու սկզբունքները:

Ուսումնասիրության վերլուծական հատվածի համար օգտագործվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից պաշտոնապես հրապարակվող այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են աշխատուժի մասնակցության, զբաղվածության, գործազրկության մակարդակները և այլն: Տվյալների վերլուծությունն իրականացվել է տնտեսավիճակագրական, համեմատման և ամփոփումների մեթոդներով:

4. Վերլուծություն

Համաձայն ԱՄԿ սահմանման՝ աշխատանքի շուկան ոլորտ է, որտեղ գործատուներն ու վարձու աշխատողները միասին խմբային կամ անհատական բանակցություններ են վարում՝ աշխատանքի վարձատրման կամ աշխատանքային պայմանները համաձայնեցնելու նպատակով: [2]

Նշենք, որ ՀՀ կառավարության կողմից հաստատված «Հայաստանի Հանրապետության 2014–2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում»՝ աշխատանքի շուկայի կարգավորման

[2] http://economic-definition.com/Employment/Rynok_truda_Labour_market__eto.html

համատեքստում աշխատանքային ռեսուրսների արդյունավետ օգտագործումը և զբաղվածության մակարդակի բարձրացումը[3] սահմանվել են որպես ՀՀ տնտեսության զարգացման գերակայություններից մեկը: Այս տեսլականի իրագործումն ուղղակիորեն կախված է աշխատանքի շուկայի բաղկացուցիչ տարածաշրջանային աշխատանքի շուկաների կայացվածության և զարգացվածության աստիճանից:

Այսպես, տարածաշրջանային աշխատանքի շուկան աշխատանքի շուկայի տեղային սեգմենտն է, որում աշխատուժի առաջարկը, պահանջարկն ու գինը ձևավորվում են տվյալ տարածաշրջանի պայմաններին համապատասխան: Դրա կարևորությունը բացահայտվում է տարածաշրջանի կտրվածքով վերջինիս կողմից իրագործվող այնպիսի գործառույթների միջոցով, ինչպիսիք են.

- աշխատանքի առաջարկի և պահանջարկի կարգավորումը,
- աշխատուժի բաշխումն ըստ տարածաշրջանների, տնտեսության ոլորտների ու ճյուղերի, մասնագիտությունների, զբաղվածության տեսակների ու ձևերի, տնտեսավարող սուբյեկտների և այլն,
- գործատուների և վարձու աշխատողների միջև կառուցողական հարաբերությունների ձևավորումը,
- ինչպես գործատուների, այնպես էլ վարձու աշխատողների շրջանում մրցակցության ապահովումը,
- տնտեսական գործունեության արդյունքում ստացած աշխատավարձի և այլ եկամուտների խելամիտ բաշխումը,
- գործազուրկների սոցիալական պաշտպանության և սոցիալական ներառման ապահովումը՝ ի դեմս սոցիալական աջակցության, ապահովագրության, ապահովության և այլ ծրագրերի,
- բնակչության զբաղվածության հիմնախնդիրների լուծմանն աջակցությունը (Трунин, 2009, էջեր 139-140):

Տարածաշրջանային աշխատանքի շուկան բնութագրող առանցքային ցուցանիշներից մեկն աշխատուժն է, նույնն է թե տնտեսապես ակտիվ բնակչությունը, որը զբաղվածների և գործազուրկների թվաքանակի հանրագումարն է ու ներառում է այն անձանց, ովքեր ձևավորում են աշխատանքի շուկան (աշխատուժի առաջարկի մասով)՝ ապրանքների արտադրության և ծառայությունների տրամադրման համար[4]:

---

[3] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր», Եր., 2014, էջ 74

[4] Տե՛ս «Աշխատանքի շուկան Հայաստանում» վիճակագրական տարեգիրք, Եր., 2019 թ., էջ 37, https://www.armstat.am/file/article/trud_2019_2.pdf

Ուսումնասիրելով աշխատուժի կառուցվածքը տարածաշրջանային կտրվածքով՝ կարող ենք փաստել, որ դրա ամենամեծ մասնաբաժինն ընկնում է Երևանին (տե՛ս գծապատկեր 1.), ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ մշտական բնակչության շուրջ 36%-ը[5], աշխատանքային ռեսուրսների 28%-ը[6] և տնտեսավարող սուբյեկտների շուրջ 52%-ը[7] կենտրոնացած են այստեղ: Աշխատուժի տարածաշրջանային բաշխվածության կենտրոնացվածությամբ աչքի են ընկնում նաև Արմավիրը (13.3%), Արարատը (10.8%) և Կոտայքը (10.7%), որոնց ևս բնութագրական են մշտական բնակչության և աշխատանքային ռեսուրսների համեմատաբար մեծ մասնաբաժինները՝ համապատասխանաբար 8-ից 10%[8] միջինացված ցուցանիշների միջակայքում:

Գծապատկեր 1. Աշխատուժի բաշխվածությունն ըստ մարզերի և ք. Երևանի 2018 թ., %



Աղբյուր: «Աշխատանքի շուկան Հայաստանում» վիճակագրական տարեգիրք, Եր., 2019 թ., էջ 40, https://www.armstat.am/file/article/trud_2019_2.pdf

---

5 Տե՛ս «Հայաստանի ժողովրդագրական ժողովածու», Եր., 2019 թ., էջ 7, https://www.armstat.am/file/article/demog_2019_2.pdf

6 Տե՛ս «Աշխատանքի շուկան Հայաստանում» վիճակագրական տարեգիրք, Եր., 2019 թ., էջ 35, https://www.armstat.am/file/article/trud_2019_2.pdf

7 Տե՛ս «Փոքր և միջին ձեռնարկատիրությունը Հայաստանի Հանրապետությունում» վիճակագրական տեղեկագիր, Եր., 2019 թ., էջ 10, https://www.armstat.am/file/article/sme__bul_2019_arm_2019.pdf

8 Տե՛ս «Աշխատանքի շուկան Հայաստանում» վիճակագրական տարեգիրք, Եր., 2019 թ., էջ 35, https://www.armstat.am/file/article/trud_2019_05.pdf

Ուշագրավ է այն հանգամանքը, որ աշխատուժի համեմատաբար մեծ թվաքանակով աչքի ընկնող մարզերն իրենց տարածքների մեծությամբ զիջում են վարչատարածքային որոշ միավորների: Օրինակ՝ իր տարածքով ամենամեծը Գեղարքունիքն է, որին, սակայն, բաժին է ընկնում ՀՀ աշխատուժի 7.3%-ը, իսկ իր տարածքով երկրորդին՝ Սյունիքին՝ ընդամենը 5.6%-ը:

Այս պատկերը վկայում է տարածաշրջանների կտրվածքով բնակչության խտության ցուցանիշների անհամաչափության մասին, ինչն էլ իր հերթին մեծ ազդեցություն է թողնում աշխատանքի և գործող այլ շուկաների վրա: Քանի որ բնակչությունն ապրանքների ու ծառայությունների հիմնական սպառողն է, ապա նա է որոշում սպառողական շուկաներին առաջադրվող պահանջները, նպաստում կայուն ենթակառուցվածքների ձևավորմանը: Վերջիններս էլ իրենց հերթին կարող են խթանել աշխատաշուկայում առողջ մրցակցային միջավայրի ստեղծումը:

Աշխատանքի շուկայում տիրող իրավիճակի մասին առավել համապարփակ պատկերացում կազմելու նպատակով անհրաժեշտ է վերլուծել նաև աշխատուժի մասնակցության, զբաղվածության և գործազրկության մակարդակների ցուցանիշները:

Աշխատուժի մասնակցության մակարդակն աշխատուժի տեսակարար կշիռն է աշխատանքային ռեսուրսներում[9]: Աշխատանքային ռեսուրսներն իրենց հերթին աշխատուժի և աշխատուժից դուրս բնակչության (աշխատանք չունեցող և աշխատանք չփնտրող) հանրագումարն են[10]: Առաջին ցուցանիշի միջոցով պարզ է դառնում, թե աշխատունակ տարիքի բնակչության որքան հատվածն է «արդյունավետ» աշխատանքի շուկայի համար, ովքեր են աշխատում և պատրաստ են աշխատանքի անցնել, որոնց տվյալները ներկայացված են գծապատկեր 2-ում:

ՀՀ աշխատուժի մասնակցության մակարդակը 2019 թ.-ին կազմել է 58.9%: Ուշագրավ է այն հանգամանքը, որ աշխատուժի մասնակցության մակարդակի բարձր ցուցանիշներ են գրանցվել Արմավիրում և Սյունիքում՝ համապատասխանաբար 78.6 և 68.5% այն պարագայում, երբ Սյունիքում աշխատուժի բաշխվածության ցուցանիշը ցածր է՝ 5.6%,

[9] Տե՛ս «Աշխատանքի շուկան Հայաստանում» վիճակագրական տարեգիրք, Եր., 2019 թ., էջ 37, https://www.armstat.am/file/article/trud_2019_2.pdf

[10] Տե՛ս «Աշխատանքի շուկան Հայաստանում» վիճակագրական տարեգիրք, Եր., 2019 թ., էջ 23, https://www.armstat.am/file/article/trud_2019_2.pdf

ինչը վկայում է այս մարզերում աշխատատեղերի քանակի համեմատական բավարար առկայությամբ: Միևնույն ժամանակ աշխատուժի մասնակցության ամենացածր մակարդակը Գեղարքունիքի մարզում է՝ 44.3%, երբ աշխատուժի բաշխվածությունը 7.3% է:

Գծապատկեր 2. Աշխատուժի մասնակցության մակարդակն ըստ մարզերի և ք. Երևանի 2019 թ., %



Աղբյուր: «Պարենային ապահովություն և աղքատություն, 2020թ. հունվար-հունիս» վիճակագրական

Քննարկելով սույն ցուցանիշը՝ նշենք նաև, որ այն 2020 թ. առաջին եռամսյակին նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ նվազել է 0.8 տոկոսային կետով՝ կազմելով 56.1%[11], ինչը 2.8 տոկոսային կետով զիջում է 2019 թ. տարեկան ցուցանիշին:

Աշխատանքի շուկան բնութագրող հաջորդ ցուցանիշները զբաղվածության և գործազրկության մակարդակներն են: Այսպես, զբաղվածության մակարդակը, զբաղվածների թվաքանակի մասնաբաժինն է աշխատանքային ռեսուրսներում[12], իսկ գործազրկության մակարդակը՝ գործազուրկների տեսակարար կշիռը աշխատուժում[13]: Համաձայն

[11] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թ. հունվար-հունիսին» վիճակագրական տեղեկագիր, Եր., 2020 թ., էջ 77, https://www.armstat.am/file/article/sv_06_20a_141.pdf

[12] Նույն տեղում, էջ 52

[13] Տե՛ս «Աշխատանքի շուկան Հայաստանում» վիճակագրական տարեգիրք, Եր., 2019 թ., էջ 82, https://www.armstat.am/file/article/trud_2019_6.pdf

ԱՄԿ-ի աշխատուժի վիճակագրության մեթոդաբանության փոփոխության՝ 2018 թ.-ից սեփական սպառման համար ապրանքների արտադրությամբ և ծառայությունների տրամադրմամբ զբաղվողներն այլևս ներառված են ոչ թե «զբաղվածներ», այլ «գործազուրկ» կամ «աշխատուժից դուրս բնակչություն» կատեգորիաներից մեկում[14]:

Այսպես, 2019 թ. զբաղվածության մակարդակը ՀՀ-ում կազմել է 48.3% (տե՛ս գծապատկեր 3.), իսկ 2018 թ.՝ 47.7%[15]: Աճը կազմել է 0.6 տոկոսային կետ: Տարածաշրջանային կտրվածքով վերջինիս համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ միջին հանրապետական ցուցանիշի գերազանցում արձանագրվել է չորս մարզում՝ Արմավիրում՝ 69.7%, Սյունիքում՝ 58.9%, Արագածոտնում՝ 57.1% և Արարատում՝ 52.0%: Երևանում և մնացած մարզերում զբաղվածության մակարդակը ցածր է միջին հանրապետական ցուցանիշից:

Գծապատկեր 3. Զբաղվածության մակարդակն ըստ մարզերի և ք. Երևանի 2019 թ, %



Հատկանշական է այն, որ զբաղվածության բարձր մակարդակով բնութագրվող Արմավիրի, Արագածոտնի և Արարատի մարզերին բնորոշ են նաև ոչ ֆորմալ զբաղվածության բարձր մակարդակները՝ համապատասխանաբար 69.1%, 58.3% և 57.7%[16]:

---

[14] Տե՛ս «Աշխատանքի շուկան Հայաստանում» վիճակագրական տարեգիրք, Եր., 2019 թ., էջ 51, https://www.armstat.am/file/article/trud_2019_6.pdf

[15] Տե՛ս «Պարենային ապահովություն և աղքատություն, 2020թ. հունվար-հունիս» վիճակագրական տեղեկագիր, Եր., 2020 թ., էջ 14, https://www.armstat.am/file/article/f_sec_2_2020_1.pdf

[16] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով», Եր., 2019 թ., էջ 129, https://www.armstat.am/file/article/marzer_2019_17.pdf

2020 թ. առաջին եռամսյակում ՀՀ զբաղվածության մակարդակի ցուցանիշը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ աճել է 0.1 տոկոսային կետով՝ կազմելով 45.0%[17], ինչը միաժամանակ 2019 թ. տարեկան ցուցանիշից ցածր է 3.3 տոկոսային կետով:

Աշխատանքի շուկան բնութագրող հաջորդ առանցքային ցուցանիշը՝ գործազրկության մակարդակը, 2019 թ.-ին կազմել է 17.9%, որի տարածաշրջանային վերլուծությունը ցույց է տալիս, որ խնդրո առարկա ցուցանիշի ամենաբարձր մակարդակը գրանցվել է Տավուշում և Երևանում՝ համապատասխանաբար՝ 26.9% և 22.7%: Գործազրկության համեմատաբար բարձր մակարդակներ են արձանագրվել նաև Վայոց ձորում՝ 21.6%, Կոտայքում՝ 20.3% և Լոռիում՝ 19.8%, իսկ ամենացածր 8.3% ցուցանիշով աչքի են ընկել Արագածոտն և Գեղարքունիքը:

Գծապատկեր 4. Գործազրկության մակարդակն ըստ մարզերի և ք. Երևանի 2019 թ., %



Աղբյուր: «Պարենային ապահովություն և աղքատություն, 2020թ. հունվար-հունիս» վիճակագրական տեղեկագիր, Եր., 2020 թ., էջ 14, https://www.armstat.am/file/article/f_sec_2_2020_1.pdf

[17] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թ. հունվար-հունիսին» վիճակագրական տեղեկագիր, Եր., 2020 թ., էջ 77, https://www.armstat.am/file/article/sv_06_20a_141.pdf

Ինչ վերաբերում է 2020 թ. գործազրկության մակարդակին, ապա այն առաջին եռամսյակում կազմել է 19.8%[18], ինչը 2019 թ. առաջին եռամսյակի ցուցանիշի նկատմամբ նվազել է 1.3 տոկոսային կետով: Ընդ որում, նշված ժամանակահատվածում գործազրկության մակարդակի ցուցանիշի նվազումն աշխատանքի շուկայում տեղի ունեցող դրական միտումներից է, ինչը կարող է պայմանավորված լինել, օրինակ, նոր աշխատատեղերի ստեղծմամբ: Միևնույն ժամանակ հարկ է նշել այն, որ գործազրկության մակարդակի 1.3 տոկոսային կետով նվազմանը զուգահեռ գրանցվել է զբաղվածության մակարդակի ավելի դանդաղ աճ՝ 0.1 տոկոսային կետով, որը կարելի է բացատրել, օրինակ, աշխատուժից դուրս բնակչության մակարդակի աճով (2020 թ. 2019 թ. առաջին եռամսյակի նկատմամբ աճը կազմել է 0.8 տոկոսային կետ): [19]

Գործազուրկների ներուժի իրացման տեսանկյունից հետաքրքրություն է ներկայացնում թափուր աշխատատեղերի և գործազուրկների թվաքանակի հարաբերակցությունը: Այսպես, օրինակ, 2018 թ. թափուր աշխատեղերը կազմել են ընդամենը 6,600 միավոր, երբ գործազուրկների թվաքանակը՝ 234,000[20] մարդ. բացասական շեղվածությունը 35.5 անգամ է: Ուշագրավ է այն, որ թափուր աշխատատեղերի 62.1%-ը բաժին է ընկնում Երևանին, ինչը ևս մեկ անգամ վկայում է Երևանի՝ աշխատանքի շուկայի կենտրոնացվածության հիմնախնդրի մասին:

Տարածաշրջանային աշխատանքի շուկաների զարգացման միտումները բացահայտելու համար չափազանց կարևոր են դրանց իրավիճակային վերլուծությունը և առկա առանձնահատկությունների հաշվի առնումը: Այս առումով կարևորագույն նշանակություն ունի պետության կողմից մշակվող և իրագործվող աշխատաշուկայի կարգավորման պետական քաղաքականությունը: Վերջինս պետք է համապատասխանեցվի յուրաքանչյուր տարածաշրջանի կարիքներին և դրանցում առկա հիմնախնդիրներին:

Առհասարակ երկրի տարածաշրջանների կառավարման արդյունավետության վրա ազդող միջոցառումներից մեկը համայնքների խոշորացումն է, որը՝ որպես գործընթաց, իրականացվել է և շարունակում է իրականացվել բազմաթիվ երկրներում, օրինակ՝ Լիտվա, Դանիա,

[18] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թ. հունվար-հունիսին» վիճակագրական տեղեկագիր, Եր., 2020 թ., էջ 77, https://www.armstat.am/file/article/sv_06_20a_141.pdf

[19] Նույն տեղում, էջ 77

[20] www.armstatbank.am

Գերմանիա և այլն: Համայնքների խոշորացմամբ հնարավոր է դառնում տարածաշրջանների ռեսուրսների առավել արդյունավետ կենտրոնացումն ու տնօրինումը, օպտիմալ քաղաքականությունների մշակումն ու իրագործումը՝ միտված տարածաշրջանների համաչափ զարգացմանը, ինչպես նաև տարածաշրջաններում աշխատանքային ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը, արդյունքում՝ աշխատանքի շուկայում ընդհանուր լարվածության թուլացմանը և հավասարակշռության հաստատմանը:

Դեռևս 90-ականներին համայնքների խոշորացման միջոցով աշխատանքի շուկայի կարգավորման արդյունավետ փորձառություն ունի Շվեդիան: Այսպես, 1990 թ. Շվեդիայի խորհրդարանի՝ Ռիքսդագի կողմից ընդունվեց տարածաշրջանային քաղաքականության ծրագիր, որի հիմքում ընկած էին Շվեդիայի հյուսիսային ու արևմտյան շրջանների ժողովրդագրական և աշխատաշուկաների խոչընդոտների հաղթահարումը: Այս որոշման արդյունքում բոլոր այն համայքները, որոնցում առկա էին երկարաժամկետ և դժվար լուծելի հիմնախնդիրներ, խմբավորվեցին (որոշ դեպքերում ժամանակավորապես) երկու առաջնային տարածաշրջաններում: Այս ծրագրի հիմնական նպատակը *երկրի զարգացման ապակենտրոնացումն* էր, այն է՝ տնտեսական գործունեության համար բարենպաստ պայմանների ձևավորումը նաև Ստոկհոլմից դուրս (Волков, 2009):

Նշենք, որ համայնքների խոշորացման քաղաքականությունը Հայաստանը որդեգրել է դեռևս 2011 թ.-ին՝ քաղաքականության բոլոր դրույթներն ամրագրելով «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման» հայեցակարգում: Վերջինումս ամրագրված մարդկային ռեսուրսներով ապահովվածության սկզբունքն անմիջականորեն ազդում է աշխատաշուկայի վրա, քանի որ այն կապված է համայնքերի խոշորացման միջոցով մարդկային ներուժի մեծացման հետ[21], ինչը ՀՀ մարզերում մարդկային ռեսուրսների հետ կապված ներկայիս ակնհայտ հիմնախնդիրների լուծման գործուն տարբերակ է:

Տարածաշրջանային զարգացման մեկ այլ փաստաթուղթ է «Հայաստանի Հանրապետության 2016-2025 թվականների տարածքային զարգացման» ռազմարությունը, որում ամրագրված «Հայաստանը պետք է կարողանա երկրի բոլոր մարզերում ակտիվացնել աճը,

[21] Տե՛ս «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգ», ՀՀ կառավարության 2011 թ. նոյեմբերի 10-ի նիստի N 44 արձանագրային որոշման հավելված, էջեր 21-22

ապահովել համաչափություն և կայունություն» տեսլականն ապահովում է տարածաշրջանային ներուժի արդյունավետ օգտագործմամբ տարածաշրջանների մրցունակության բարձրացումը, միևնույն ժամանակ տարածքային միասնականությունը[22], ինչն էլ ուղղակիորեն փոխկապված է տարածաշրջանային աշխատաշուկաների զարգացման և աշխատանքային ռեսուրսների օպտիմալ օգտագործման հետ:

Խնդրո առարկա համատեքստում առանձնացվում է նաև խնդրահարույց սահմանամերձ գոտիների ուշադրության կենտրոնում պահպանումը, որին է միտված դեռ 2002 թ. ընդունված «Հայաստանի Հանրապետության սահմանամերձ տարածաշրջանների զարգացման համալիր ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքը: Այս օրենքի շրջանակներում առանձնացվում են տարածաշրջանային աշխատանքի շուկայի զարգացմանը նպաստող այնպիսի գործիքներ, ինչպիսիք են հարկային արտոնությունների տրամադրումը, համայնքներին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից լրավճարների հատկացումը, ազատ ձեռներեցությամբ զբաղվելու համար համայնքի անդամներին ու վերաբնակիչներին արտոնյալ պայմաններով վարկերի հատկացումը, միջազգային տարբեր ծրագրերով ստացված ֆինանսական միջոցներից որոշակի մասի նպատակաուղղումն արտադրության կազմակերպմանը[23] և այլն: Այս ամենն ուղղակիորեն միտված է տարածաշրջանային գործարար միջավայրի աշխուժացմանը, որը վերջիվերջո կբարելավի սոցիալ-տնտեսական իրավիճակը տարածաշրջաններում՝ նպաստելով զբաղվածության մակարդակի բարձրացմանը, արդյունքում՝ բնակչության կյանքի որակի բարելավմանը:

5. **Եզրակացություն**

Չնայած տարածաշրջանային զարգացման քննարկված գործիքների առկայությանը, ինչպես նաև զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրերի, այդ թվում՝ մարզային կտրվածքով մշակմանը և իրագործմանը՝ ՀՀ տարածաշրջանային աշխատաշուկաները բնութագրող հիմնական ցուցանիշների վերլուծության արդյունքները վկայում են այն մասին, որ դրանք դեռևս բավարար չեն մարզերի սոցիալ-տնտեսական համաչափ զարգացվածության ապահովման համար: Տարածաշրջաններում առկա են այնպիսի հիմնախնդիրներ,

[22] Նույն տեղում:

[23] «Հայաստանի Հանրապետության սահմանամերձ տարածաշրջանների զարգացման համալիր ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենք, 2002 թ.

ինչպիսիք են տնտեսավարող սուբյեկտների կենտրոնացումը մայրաքաղաքում, թափուր աշխատատեղերի անբավարար քանակը, տվյալ աշխատատեղը զբաղեցնելու համար գործազուրկներին ներկայացվող որակական պահանջների անհամատեղելիությունը, ոչ ֆորմալ զբաղվածության համեմատաբար բարձր մակարդակը, աշխատանքային ռեսուրսների՝ մեծ ծավալներով արտագաղթը, ինչն իր հերթին հանգեցնում է ՀՀ–ից «ուղեղների» արտահոսքի և այլն ու այս ամենի արդյունքում՝ աշխատանքի շուկայում ընդհանուր լարվածության առկայությունը:

Ներկայացված խնդիրների լուծումը հնարավոր է արդեն իրականացվող միջոցառումների հետևողական իրագործմամբ՝ վերջիններս հարմարեցնելով տարածաշրջանների առանձնահատկություններին և դրանցում առկա իրավիճակին: Ընդ որում, անհրաժեշտ է նախ թիրախավորել սահմանամերձ գոտիները, որտեղ ներկայացված հիմնախնդիրների լուծման հարցը օրհասական է: Արդյունքում կձևավորվի զբաղվածության ակտիվ տարածաշրջանային քաղաքականություն, այսինքն՝ այնպիսի քաղաքականության, որն ուղղված կլինի ոչ թե տարածաշրջանային հիմնախնդիրների հետևանքների, այլ հենց դրանք «ծնող» պատճառների վերացմանը:

Գրականություն

References (with English translation and transliteration)

- «Հայաստանի Հանրապետության 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր», Եր., 2014 թ.
- «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգ», Եր., 2011 թ.
- «Հայաստանի Հանրապետության 2016-2025 թվականների տարածքային զարգացման» ռազմարություն, Եր., 2016 թ.
- «Հայաստանի Հանրապետության սահմանամերձ տարածաշրջանների զարգացման համալիր ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենք, Եր., 2002 թ.
- «Սահմանամերձ համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» ՀՀ օրենք, 2014 թ.
- ՀՀ վիճակագրական կոմիտե, «Աշխատանքի շուկան Հայաստանում» վիճակագրական տարեգիրք, Եր., 2019 թ.
- ՀՀ վիճակագրական կոմիտե, «Հայաստանի ժողովրդագրական ժողովածու», Եր., 2019 թ.

- ՀՀ վիճակագրական կոմիտե, «Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով», Եր., 2019 թ.
- ՀՀ վիճակագրական կոմիտե, «Փոքր և միջին ձեռնարկատիրությունը Հայաստանի Հանրապետությունում» վիճակագրական տեղեկագիր, Եր., 2019 թ.
- ՀՀ վիճակագրական կոմիտե, «Պարենային ապահովություն և աղքատություն, 2019 թ. հունվար-դեկտեմբեր», Եր., 2020 թ.
- ՀՀ վիճակագրական կոմիտե, «Պարենային ապահովություն և աղքատություն, 2020թ. հունվար-հունիս» վիճակագրական տեղեկագիր, Եր., 2020 թ.
- ՀՀ վիճակագրական կոմիտե, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թ. հունվար-հունիսին» վիճակագրական տեղեկագիր, Եր., 2020 թ.
- George J. Borjas, “Labour Economics”, seventh edition, McGraw-Hill Education, NY, 2015
- Ricardo D., Principles of Political Economy and Taxation: Vol. I of the Collected Works and Correspondence of David Ricardo / Sraffa P., Cambridge University Press, 1951
- Smith A., An Inquiry into the Nature and Cause of the Wealth of Nations: Books I, II, III, IV and V / Soares S.M., MetaLibri Digital Library, 2007
- Волков А.М., Региональная политика Швеции, Журнал „Мировое и национальное хозяйство”, Издание МГИМО МИД России, 2009, №1(8)
- Volkov A.M., Regional policy of Sweden, Journal "World and National Economy", Edition of MGIMO MFA of Russia, 2009, No. 1 (8) (in Russian)
- Остапенко Ю.М., Экономика труда: Учебное пособие, 2-е издание, М., ИНФРА-М, 2007
- Ostapenko Yu.M., Labor Economics: Textbook, 2-nd edition, M., INFRA-M, 2007 (in Russian)
- Рофе А.И., Рынок труда, М., «МИК», 2003
- Rofe A.I., Labor Market, M., "MIC", 2003 (in Russian)
- Трунин С.Н., „Экономика труда: Учебник”, М., Экономика, 2009
- Trunin S.N., "Labor Economics: Textbook", M., Economics, 2009 (in Russian)
- Экономика и социология труда: Учебник / Гага В.А., Т., Издательство Томского государственного университета, 2008
- Economics and Sociology of Labor: Textbook / Gaga V.A., T., Publishing House of Tomsk State University, 2008 (in Russian)

Ընդունված է 16.11.2020
Գրախոսված է 22.1.2021

ОСОБЕННОСТИ РЕГИОНАЛЬНОГО РЫНКА ТРУДА РА

Ананян К.Г.

Аннотация. В процессе становления рынка труда каждой страны играют значительную роль формирующие его региональные рынки труда, и в связи с этим, очень важно их эффективное регулирование. Для этого необходимо оценить состояние регионального рынка труда с учетом имеющихся особенностей, которое позволит выявить проблемы и принять меры по их преодолению. Основной целью последних должна~~ы~~ быть эффективное использование трудовых ресурсов и снижение безработицы в регионах, в результате — снижение общей напряженности и установление равновесия на рынке труда.

Ключевые слова: региональный рынок труда, трудовые ресурсы, рабочая сила, участие в рабочей силе, занятость, безработица, регулирование рынка труда

THE FEATURES OF REGIONAL LABOUR MARKET IN THE RA

Ananyan K.G.

Abstract. In the formation process of each country's labour market, forming it, regional labour markets play a considerable role, and in this regard, their effective regulation is significantly important. For this purpose, it is necessary to assess the situation of the regional labour market, taking into consideration the existing features, which will allow us to identify problems and carry out measures to overcome them. The main goal of the latter should be efficient use of labour resources and reduction of unemployment in the regions, as a result weakening overall tension and establishing equilibrium in the labour market.

Keywords: regional labor market, labor resources, labor force, labor force participation, employment, unemployment, labor market regulation.